ՀՏԴ: 929:947.922 Չխենկելի

DOI: 10.54503/0135-0536-2025.3-221

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱԿԱԿԻ ՉԽԵՆԿԵԼԻԻ ՆԱՄԱԿԸ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ (1918 թվական, սեպտեմբեր)*

Բանալի բառեր՝ Ակ. Չխենկելի, Վրաստան, Հայաստան, Օսմանյան կայսրություն, Ախալցխա, Ախալքալաք, Բաթումի համաժողով, սահմանների հաստատում, Բրեստ-Լիտովսկ:

Առաջին համաշխարհային պատերազմի վերջին փուլում՝ 1918 թ., Անդրկովկասը վերաձևավորվում էր որպես աշխարհաքաղաքական նոր կենտրոն՝ ազատագրվելով նախկին կայսրությունների ազդեցությունից ու ձգտելով ձևավորել անկախ պետական կազմավորումներ: Ռուսական կայսրության փլուզման հետևանքով ստեղծված նորանկախ պետությունները՝ Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը, հայտնվել էին միաժամանակյա ճնշման տակ՝ ինչպես տարածաշրջանային ռազմական գործողությունների, այնպես էլ համաշխարհային գերտերությունների շահերի պատճառով: Այս բարդ ժամանակահատվածում կարևորվում էին դիվանագիտական այն քայլերը, որոնք արտացոլում էին ոչ միայն այդ երկրների ինքնորոշման ձգտումը, այլև փոխհարաբերություններն արտաքին խաղացողների հետ:

Այդ տեսակետից ուշագրավ է Վրաստանի արտաքին գործերի նախարար Ակակի Չխենկելիի[1] 1918 թ. սեպտեմբերի 22-ի նամակը՝ ուղղված գերմանական կառավարությանը, որը հիմնականում վերաբերում է Ախալցխայի և Ախալքալաքի գավառների խնդրին: Նամակում նա հանդես է գալիս կտրուկ ընդդիմությամբ Օսմանյան կայսրության տարածքային նկրտումներին և մերժում հանրաքվե անցկացնելու առաջարկը՝ այն բնորոշելով որպես սկզբունքների «աբսուրդացման» դրսևորում: Վրաստանի համար այս գավառներն ընկալվում էին որպես երկրի «օրգանական» մաս՝ հիմնավորված պատմական, իրավական ու ազգագրական փաստարկներով: Հղում է արվում 1783 թ. Գեորգիևյան պայմանագրին, ինչպես նաև Գերմանիայի կողմից Վրաստանի տարածքային ամբողջականության ճանաչման մասին 1917–1918 թթ. հավաստագրերին:

** Ներկայացվել է 02. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

[1] Ակակի Չխենկելի (1874–1959) – վրացի քաղաքական գործիչ և հրապարակախոս, ով եղել է Ռուսաստանի ու Վրաստանի մենշևիկյան շարժման առաջնորդներից մեկը: 1918 թ. փետրվարի 14-ին Չխենկելին դարձել է Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության արտգործնախարարության պետի տեղակալը: Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության անկախացումից հետո ստանձնել է Արտաքին գործերի նախարարի պաշտոնը (տե՛ս საქართველოს ბიოგრაფიული ლექსიკონი. თბილისი, 1919, გვ. 15).

Վրաստանի այս մոտեցումը, սակայն, ամբողջությամբ չի համընկնում տարածաշրջանի մյուս երկրների դիրքորոշումների հետ: Հայկական կողմը, որը նույնպես հավակնում էր նույն տարածքներին՝ մասնավորապես ազգաբնակչության կազմով և մշակութային ժառանգությամբ պայմանավորված, առերեսվում էր և՛ օսմանյան ռազմական սպառնալիքին, և՛ վրացական տարածքային պահանջներին: Հայկական քաղաքական վերնախավի մոտեցումները՝ մասնավորապես Հայաստանի Առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիրքորոշումները, շեշտադրում էին այդ գավառներում հայ բնակչության գերակշռությունը, ինչը հիմք էր տալիս խոսել հայերի ինքնորոշման իրավունքի և պատմական արդարության մասին:

Մյուս կողմից՝ Օսմանյան կայսրությունը, որպես տարածաշրջանում փաստացի գերիշխող ռազմական ուժ, ճնշում էր գործադրում Վրաստանի ու Հայաստանի վրա՝ փորձելով իրավական տեսք տալ իր նկատառումներին: Օսմանյան դիվանագիտությունը հրապարակավ ընդունում էր 1918 թ. մարտի 3-ի Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված դրույթները, սակայն իրականում խախտում էր դրանք՝ գրավելով Բաթումից Կարս ձգվող տարածքները: Այդ ընթացքում Թուրքիան, օգտվելով Անդրկովկասի երկրների անկախության հռչակումից և հրաժարվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն ընդունելուց, շարունակում էր իր ագրեսիվ քայլերը՝ ռազմաքաղաքական գործողություններ նախապատրաստելով: Այդ առիթով վրաց ամենափորձառու քաղաքական գործիչներից մեկը՝ Նոյ Ժորդանիան, իր հուշերում գրել է. «Կարիք չկար երկար սպասելու հետևանքներին. Թուրքերը ներխուժեցին Վրաստան և գրավեցին Ախալքալաքի գավառը և Հայաստանի երեք քառորդ մասը»[2]:

Ինչպես երևում է թե՛ Ջեննկելիի նամակից, թե՛ հայկական հայտնի արձագանքներից, օսմանյան դիրքորոշումն աչքի էր ընկնում անորոշությամբ՝ մի կողմից՝ խոստանալով ճանաչել նորանկախ պետությունների սահմանները, մյուսից՝ աշխատելով ռազմական ներկայության միջոցով փոխել դրանք:

Հայտնի է, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն էական շրջադարձ էր Անդրկովկասի ժողովուրդների համար: Այն ոչ միայն թուլացրեց ռուսական ազդեցությունը տարածաշրջանում, այլ նաև ստիպեց հայերին ու վրացիներին ինքնուրույն որոշել իրենց ճակատագիրը: Պայմանագրի պայմանները նպաստեցին մի կողմից՝ Օսմանյան կայսրության ներխուժմանը տարածաշրջան, մյուս կողմից՝ անկախ պետությունների ձևավորմանը:

«Վրաստանի, Հայաստանի և Օսմանյան կայսրության միջև սահմանների հաստատման և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանների պահպանման վերաբերյալ» խորագրով Ակ. Ջեննկելիի նամակը՝ ուղղված գերմանական կառավարությանը, պահվում է Վրաստանի ազգային արխիվում (ՎԱԱ)՝ ֆոնդ 1864, ցուցակ 2, գործ 47: Ստորև առաջին անգամ հրապարակվող նամակին կից ներկայացվում է նաև նրա հայտարարության ընօրինակը՝ ուղղված դաշնակից կառավարություններին: Վավերագրերը վրացերենից հայերեն ենք թարգմանել բնագրին հնարավորինս հարազատ: Կատարված հավելումները բերվում են ուղղանկյուն փակագծերում [ ]:

ՋԵՆՆԻ ԹԱՄԱՐՅԱՆ

---

[2] *Տե՛ս* Н. Жордания. Моя жизнь. Станфорд, 1968, с. 85.

ՎՐԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԲՐԵՍՏ–ԼԻՏՈՎՍԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22 սեպտեմբերի 1918 թ.
ք. Բեռլին

*Ձերդ գերազանցություն**

Ինչպես պարզվել է, այս օրերին վճռվելու է Կովկասի և Օսմանյան կայսրության միջև սահմանների հարցը: Անհնար է թաքցնել այն փաստը, որ ինձ համար ստեղծվել է խիստ անհարմար և նույնիսկ ամոթալի իրավիճակ, քանի որ հնարավորություն չունեմ անձամբ մասնակցելու դաշնակից չորս պետությունների միջև ընթացող այն բանակցություններին, որոնք ուղիղ առնչվում են նաև Վրաստանի կենսական շահերին:

Իմ և Օսմանյան կայսրության մեծ վեզիրի[3] անձնական հանդիպման ընթացքում վերջինս առաջարկեց Ախալցխայի գավառում կազմակերպել հանրաքվե: Չեմ կարող չհայտնել իմ մտահոգությունն այն կապակցությամբ, որ այս նախաձեռնությունը կարող է լուրջ թյուրիմացության առիթ տալ: Նախևառաջ հարկ եմ համարում ընդգծել, որ Վրաստանի կառավարությունը որևէ կերպ չի կարող համարվել բոլշևիկյան, ինչպես ո՛չ էլ մեր դաշնակից պետությունների կառավարությունները, ուստի մեզ համար անընդունելի է ամեն սկզբունք հասցնել աբսուրդի, հատկապես՝ պետական կառավարման հարցերում: Ճանաչելով ինքնորոշման իրավունքի արժեքը՝ միաժամանակ պետք է արձանագրել, որ երբ այդ սկզբունքը հավասարապես տարածվում է ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքի և նույնիսկ տան վրա, այն դառնում է հակասական ու վտանգավոր պետության ամբողջականության տեսանկյունից: Ախալցխայի[4] և Ախալքալաքի[5] գավառները կազմում են Վրաստանի անբաժա-

---

** Նամակն ուղղված է գերմանական կառավարությանը, մասնավորապես արտաքին գործերի նախարարին:*

[3] Նկատի ունի Մեհմեդ Թալեաթին (Թալեաթ փաշա, 1874–1921), ով 1913–1918 թվականներին զբաղեցրել է Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարարի պաշտոնը:

[4] Ախալցխա, Ախալցիխե [վրաց. ახალციხე, *թարգմանաբար՝ Նոր ամրոց, հին անունները՝ «ԼՈՄՍԻԱ» – «Լոմսիա» և «Խիսկա»] – քաղաք ներկայիս Վրաստանի հարավում, Ախալցխայի շրջկենտրոն, Սամցխե-Ջավախք մարզի վարչական կենտրոն (տե՛ս* ՕԼՈԱ ՖԱՎՖԱՎԱՅԻՍ ԱՆԱՆՈՒՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԶԱՅԻ ԱՌՑԱՆՑԱԿԱՆ ԲԱԶԱ.– https://www.nplg.gov.ge/wikidict/index.php/%E1%83%9B%E1%83%97%E1%83%90%E1%83%95%E1%83%90%E1%83%A0%E1%83%98_%E1%83%92%E1%83%95%E1%83%94%E1%83%A0%E1%83%93%E1%83%)*:*

[5] Ախալքալաք [վրաց. ახალქალაქი *[Ախալքալաքի], թարգմանաբար՝ Նոր քաղաք] – քաղաք ներկայիս Վրաստանում, Սամցխե-Ջավախք մարզի կազմի մեջ մտնող համանուն շրջանի շրջկենտրոն, Ջավախք երկրամասի [պատմական Մեծ Հայքի Գուգարք նահանգի Վերին Ջավախք գավառի տարածք] կենտրոն (տե՛ս* ՕԼՈԱ ՖԱՎՖԱՎԱՅԻՍ ԱՆԱՆՈՒՆԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱԶԱՅԻ ԱՌՑԱՆՑԱԿԱՆ ԲԱԶԱ*)*:

նելի մասը: Դրանք կարող են գոյություն ունենալ միայն Վրաստանի միասնական տարածքում, ուստի անհրաժեշտ է հենց Վրաստանից՝ որպես ամբողջական պետությունից հարցնել՝ արդյոք ընդունելի՞ է իր տարածքային ամբողջականության խախտումը:

Այս հարցին արդեն անդրադարձել եմ իմ նախորդ գրավոր դիրքորոշմամբ[6], որտեղ չեշտել եմ՝ Ախալցխան Վրաստանի դարպասն է: Նույն տեքստում նշել եմ նաև, որ Օսմանյան կառավարությունն այժմ պատրաստվում է հենց այդ դարպասն ապամոնտաժել՝ փաստացի կասկածի տակ դնելով Վրաստանի գոյությունը իր ծննդյան օրից ի վեր: Այդ մոտեցումը, բացի Վրաստանը մշտապես սպառնալիքի և վախի մթնոլորտում պահելու փորձից, որևէ այլ նպատակ չի կարող հետապնդել, քանզի Ախալցխան ինքնին ռազմավարական կամ տնտեսական նշանակալի արժեք չի ներկայացնում:

Ի լրումն վերոնշյալի՝ հիշեցնեմ 1783 թ. պայմանագիրը, որը կնքվել է ռուսական կայսրուհի Եկատերինա II-ի[7] և վրաց թագավոր Հերակլ II-ի[8] միջև: Այդ փաստաթղթում, ի թիվս այլ դրույթների, սահմանված էր Ռուսաստանի պարտավորությունը՝ ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Վրաստանի գավառները՝ Սամցխե-Սաթաբագոն[9], Բաթումը, Արդահանը[10], Օլթիսը[11], ինչպես նաև Ախալցխան ու Ախալքալաքը Վրաստանին վերադարձնելու ուղղությամբ:

Ժամանակի ընթացքում Ռուսաստանի կառավարությունը հետևողականորեն շարունակեց իր քաղաքական ուղղվածությունը. չնայած սկզբնական մտադրություններին՝ նա վերացրեց Վրաստանը որպես անկախ պետական միավոր: Այնուամենայնիվ, 1829 թ. Ախալցխան և Ախալքալաքը միացվեցին Վրաստանին, իսկ Բաթումը, Արդահանն ու Օլթիսը Վրաստանի կազմից 1878–

---

[6] *Այդ գրությունը մեզ հայտնի չէ:*

[7] *Եկատերինա II (Եկատերինա Ալեքսեևնա, 1729–1796) – Ռուսական կայսրության ամենաերկար կառավարող կայսրուհին, ում օրոք կայսրությունն էլ ավելի հզորացավ ու ընդարձակվեց:*

[8] *Հերակլ II-րդ (1720–1798) – Կախեթի (1744 թ.), ապա՝ Քարթլի-Կախեթի (1762 թ.) թագավոր: Խոսքը Գեորգիևսկի (քաղաք Հյուսիսային Կովկասում) պայմանագրի մասին է, որով Վրաստանը ճանաչել է Ռուսաստանի հովանավորությունը և հրաժարվել ինքնուրույն արտաքին քաղաքականությունից:*

[9] *Սամցխե-Սաթաբագո – ֆեոդալական իշխանություն հարավարևմտյան Վրաստանում XIV դարի առաջին կեսից մինչև XVII դարը (տե՛ս* ՕԼՈՒԱ ՃԱՎՃԱՎԱՁԻՆ *ՍԱԽԵԼՈԾԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԱՐԳԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ, ԵՐԵՎԱՆ, 2010, ԷՋ 224):*

[10] *Արդահան – քաղաք Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Արդահան գավառում, հետագայում՝ Արևելյան Հայաստանում, Կարսի մարզի Արդահանի գավառում, Կուրի վերին հոսանքի շրջանում (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1980, էջ 409):*

[11] *Օլթի, Օլթիս (թուրքերեն՝* Oltu*) – քաղաք Էրզրումի մարզում, համանուն շրջանի շրջկենտրոնը: Տեղակայված է Ճորոխ գետի աջակողմյան վտակ Օլթիի ափին: Նախքան Հայոց ցեղասպանությունը Օլթին, որն այն ժամանակ գտնվում էր Ռուսական կայսրության կազմում, ունեցել է 1090 տուն բնակչություն, որից մոտ 1000 հայեր էին (տե՛ս* ՕԼՈՒԱ ՃԱՎՃԱՎԱՁԻՆ *ՍԱԽԵԼՈԾԻՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԱՐԳԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ, ԵՐԵՎԱՆ, 2010, ԷՋ 224):*

1918 թթ. դուրս մնացին՝ Գերմանիայի համաձայնությամբ՝ ցավալիորեն կորված լինելով վրաց պետականության համար:

Այսպիսով՝ Վրաստանը կորցրեց ոչ միայն Արդահանի ու Օլթիսի շրջանները, որոնց բնակչությունն արդեն իսկ լիովին ինտեգրված էր՝ տիրապետելով վրացերենին, այլև իսկապես վրացական Բաթումի նահանգը: Անհնար է հավատալ, որ նույն Գերմանիայի համաձայնությամբ կարող էր տեղի ունենալ ներխուժում Վրաստանի Ախալցխայի և Ախալքալաքի գավառներ: Նման զարգացումները բացասական լուրջ ազդեցություն կունենան վրաց ազգի ինքնագիտակցության վրա, քանի որ ակամայից կձևավորվի հետևյալ մտահոգիչ համեմատությունը. Ռուսաստանի հետ մերձեցումը հանգեցրեց կորցրած գավառների վերադարձին, մինչդեռ Գերմանիայի հետ մերձեցումը՝ դրանց կորստին:

Կխնդրեի Ձերդ գերազանցությանն անդրադառնալ Գերմանիայի կայսերական նախկին դեսպան բարոն Ֆոն Վանգենհայմի[12] Ստամբուլում 1918 թ. (14/91) թվագրված գրավոր հայտարարությանը, որը նա փոխանցել է Վրաստանի կոմիտեի մի անդամի: Այս փաստաթղթով Գերմանիայի կառավարությունը պարտավորվում էր ճանաչել Վրաստանի անկախությունը նրա նախապատերազմյան սահմաններում՝ ներառյալ վերը նշված գավառները: Այս հայտարարությունը հաստատվում է երկրորդ՝ համառոտ գրավոր հավաստմամբ, որը, ըստ տեղեկությունների, տրամադրվել է Բեռլինում գործող վրացական կոմիտեին 1917 թ. դեկտեմբերի 17-ին՝ Գերմանիայի պետքարտուղարի տեղակալ Freiherr von dem Bussche[13]*-ի (Ֆրեյհեր Ֆոն դեմ Բուշ) կողմից: Տվյալ փաստաթղթերը հիմք են տալիս մտահոգվելու, որ Վրաստանի օրգանական տարածքների զավթումը կարող է լրջորեն խաթարել Գերմանիայի հեղինակությունը ողջ Կովկասում: Վրաց ժողովրդի համար սա կլինի անհասկանալի և անընդունելի, քանի որ միայն անկախ և կայուն Վրաստանը կարող է դառնալ Կովկասում կենտրոնական դերակատարություն ստանձնող պետություն և կամուրջ դեպի Ասիա:*

Ցավալիորեն, օսմանյան կառավարությունը, ինչպես պարզ է դառնում, չի նկատում այս կարևոր հանգամանքը: Այնինչ՝ դեռևս Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից առաջ՝ դաշնակից պետության հետ փոխանակված հատուկ նոտայում, Օսմանյան կայսրությունը ճանաչել էր Վրաստանի անկախությունը նրա ազգագրական սահմանների շրջանակներում, ինչը, բացի ամենից, բխում էր նաև իր իսկ շահերից:

Նրան բավական էր, Բրեստ-Լիտովսկի զինադադարին հակառակ, զենքի ուժով գրավել Բաթումի, Արդահանի ու Կարսի տարածքները և Բաթումում սպառնալիքի ներքո պայմանագիր կնքել Վրաստանի կառավարության հետ,

---

[12] Հանս Ֆրայհեր Ֆոն Վանգենհայմ (1859–1915) – գերմանացի դիվանագետ: 1912–1915 թթ. եղել է Գերմանիայի դեսպանը Թուրքիայում:

[13] Փաստաթղթում տվյալ անունն է՝ գերմաներենով, սակայն 1917 թ. Գերմանական կայսերական կառավարության արտաքին գործերի գերատեսչության պետքարտուղարի պաշտոնը զբաղեցրել է կայսերական իսկական գաղտնի խորհրդական Ռիխարդ Ֆոն Կյուլմանը (1873–1948): Նա աչքի ընկավ, մասնավորապես, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1917 թ. օգոստոսից 1918 թ. հուլիսը, և երբ գերմանական պատվիրակության ղեկավարն էր Բրեստ-Լիտովսկի բանակցություններում:

և նա կզրկվեր Ախալցխայի ու Ախալքալաքի գավառներից: Նրա բանակը երկաթուղային ճանապարհով ներթափանցեց Կովկասյան Հայաստանի խորքերը՝ Ալեքսանդրապոլից մինչև Ջուլֆա, ինչը հանգեցրեց մի քանի հարյուր հազար տեղացի բնակչության զանգվածային գաղթին դեպի Վրաստան՝ վտանգի տակ դնելով նաև Վրաստանի անվտանգությունն այս օրհասական պահին:

Այդ հանգամանքների լույսի ներքո Վրաստանի պետական շահը միանշանակ պահանջում էր Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նշված սահմանների անխախտ պահպանություն ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի համար: Միայն այդ պարագայում գաղթած հայերը հնարավորություն կունենան վերադառնալ իրենց հայրենիքը: Նման մոտեցումը համապատասխանում էր նաև Օսմանյան կայսրության կենսական շահերին: Կայսրության կառավարությունն անշուշտ գիտակցում էր, որ որևէ քաղաքական ուժ Կովկասը չի զիջի Օսմանյան կայսրությանը, ուստի վերջինիս կենսական շահերից էր բխում, որ Կովկասի ժողովուրդները ձևավորեն ինքնիշխան պետություններ՝ կայսրության սահմաններում: Այդ պետությունների կայացումը, սակայն, հնարավոր է միայն այն դեպքում, երբ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի սահմանները մնան անփոփոխ:

Վրաստանում և ընդհանրապես Կովկասում Գերմանիայի ունեցած մեծ շահերին ես չեմ անդրադառնա, քանի որ դրանք Ձերդ գերազանցությանն ավելի լավ են հայտնի, քան ինձ: Սակայն թույլ տվեք նշել, որ Հայկական հարցը, Գերմանիայի պատշաճ ուշադրության բացակայության դեպքում, կարող է վերածվել Կովկասյան Բելգիայի հարցի: Բացի այդ, Ալեքսանդրապոլ–Ջուլֆա ճանապարհը, որն անցնում է Հյուսիսային Պարսկաստանի միջով և առաջնային տնտեսական նշանակություն ունի Գերմանիայի համար, չպետք է անցնի Օսմանյան կայսրության վերահսկողության տակ: Անկախ Հայաստանը, լինելով այդ ճանապարհի երկայնքի երկու կողմերում, կարող է լինել առավել նպատակահարմար գործընկեր: Այդ համատեքստում Պարսկաստանում Գերմանիայի ազդեցության ուժեղացումն առավել քան ցանկալի է:

Միևնույն ժամանակ Պարսկաստանը, որտեղ Գերմանիան վայելում էր լայն համակրանք դեռևս հեղափոխության առաջին օրերից, հնարավոր է երես դարձնի վերջինից, եթե Ալեքսանդրապոլ–Ջուլֆա–Թավրիզ ուղղությամբ օսմանցիներն ընդլայնեն իրենց քաղաքական ներկայությունը: Անկախ Հայաստանի ստեղծումը կարող է նաև վճռորոշ դեր ունենալ Բաքվի ապագայի հարցում: Այդ դեպքում վրացիների միջնորդությամբ հնարավոր կլինի հասնել համաձայնության հայերի ու թաթարների միջև, ինչը կհանգեցնի Բաքվում իրավիճակի կայունացմանը: Այս պայմաններում այնտեղ ապրող հայերը կվերադառնան իրենց կովկասյան կողմնորոշմանը և կհրաժարվեն արտաքին ուժերից փրկություն ակնկալելու մտքից:

Վերոնշյալ բոլոր հանգամանքները, իմ խորին համոզմամբ, միանշանակ հուշում են, որ Օսմանյան կայսրությունը պետք է խուսափի անցյալի սխալների կրկնումից: Վրաստանն իր անկախությունը պահպանել է գրեթե երկու հազար տարի: 1783 թվականին՝ օսմանյան և պարսկական կայսրությունների միջև չդադարող հակամարտությունների պայմաններում, նա ստիպված եղավ միավորվել Ռուսաստանի հետ, ինչն էլ հանգեցրեց ողջ Կովկասի՝ վերջինիս կողմից բռնակցմանը: XX դարում Վրաստանը վերագտել է իր անկախությունը՝ վստահ լինելով, որ Օսմանյան կայսրությունը բարեկամաբար կմոտենա

իր նոր կարգավիճակին, քանի որ հենց այդպիսի վերաբերմունքը լավագույնս համահունչ է նաև նրա սեփական կենսական շահերին:

Արտաքին գործերի նախարար՝ Ակակի Չխենկելի:

ՎԱԱ, ֆ. 1864, ց. 2, գ. 47, թթ. 33–40 շրջ.: Բնագիր: Մեքենագիր:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ
ԱԿԱԿԻ ՉԽԵՆԿԵԼԻԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆՕՐԻՆԱԿԸ

Ձեր առաջարկով, փոխքարտուղար պարոն Բ. Շտումդի միջնորդությամբ, թույլ տվեք անդրադառնալ մի հարցի, որի շուրջ կցանկանայի ներկայացնել դրավոր դիտարկում: Խոսքը վերաբերում է Ախալցխայի և Ախալքալաքի շրջաններին, որոնց Վրաստանին պատկանելության փաստը օսմանյան կառավարությունը վիճարկում է՝ առանց որևէ հիմնավոր պատճառաբանության:

Աշխարհագրորեն նշված շրջանները կազմում են Թիֆլիսի նահանգապետության մասը և հանդիսանում են Վրաստանի անբաժան բաղադրիչը: Միևնույն ժամանակ, նրանք բնականորեն առանձնացված են Բաթում-Կարս-Արդահան տարածաշրջանից՝ լեռնաշղթաներով: Օսմանյան կառավարությունը, սակայն, ձգտում է դրանք իր տարածքին միացնել:

Աշխարհագրական այս առանձնահատկությունը բերում է կարևոր հետևանքի. նշված շրջանների բնակչության տնտեսական կյանքը կապված է Վրաստանի հետ: Նրանց առևտրատնտեսական հարաբերությունները կենսունակ են հատկապես Թիֆլիսի հետ, ուր բերում են իրենց արտադրանքը՝ հացահատիկ, միրգ, մեղր, փայտանյութ, բուրդ, անասուններ, կաշվե իրեր, պանիր, կարագ և այլն: Պատասխանաբար ստանում են համապատասխան փոխհատուցում: Նշված շրջանների ռազմավարական նշանակությունը Վրաստանի համար բացառիկ կարևորություն ունի: Վրաստանը՝ որպես պետություն, «տուն է առանց դարպասի». մի իրողություն, որը ճանաչված է թե՛ Վրաստանում, թե՛ Օսմանյան կայսրությունում: Նախկինում, երբ Ախալցխան գտնվում էր օսմանյան տիրապետության ներքո, Վրաստանը փաստացի բաժանված էր Արևելյան ու Արևմտյան հատվածների, ինչը ծանր հարված էր նրա քաղաքական միասնությանը և տնտեսական զարգացմանը:

Ազգագրական տեսանկյունից ևս օսմանյան հավակնությունները չունեն արդարացում: Ախալցխայի 96.000 բնակչից միայն 14.000 են մահմեդական ու քրիստոնյա վրացիներ, իսկ մեծամասնությունը՝ հայեր են: Ախալքալաքում 108.000 բնակչից շուրջ 72.000-ը հայեր են, մնացածը՝ վրացիներ: Օսմանյան օկուպացիայի հետևանքով ավելի քան 100.000 քրիստոնյա դարձել են փախստականներ Վրաստանում՝ ենթարկվելով խիստ զրկանքների. նրանց տները ավերված են:

Վերոնշյալը հանգեցնում է միակ եզրակացության. Ախալցխայի և Ախալքալաքի շրջանների նկատմամբ օսմանյան կառավարության հավակնությունները զուրկ են թե՛ աշխարհագրական, թե՛ ազգագրական, թե՛ տնտեսական և թե՛ ռազմավարական որևէ հիմքից: Քաղաքական տեսանկյունից սա վկայում է օսմանյան կառավարության ագրեսիվ դիրքորոշման մասին Վրաստանի նկատ-

մամբ, քանի որ հայտնի է՝ խաղաղ ապրել Թիֆլիսում ու Քութայիսում հնարավոր չէ, եթե Ախալցխայում և Ախալքալաքում իշխում է օտար ուժ:

Օսմանյան կողմի այս դիրքորոշումը վկայում է, որ այն չի ընդունում Վրաստանի անկախությունը և չի ձգտում բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Սա, իր հերթին, անարդար վերաբերմունք է մի ժողովրդի նկատմամբ, որի քաղաքական գործիչները մշտապես հանդես են եկել Օսմանյան կայսրության հետ բարեկամական համագործակցության օգտին[14]:

Չեմ խորանա այն հանգամանքի մեջ, որ Ախալցխայի և Ախալքալաքի անջատումը Վրաստանից հակասում է Բրեստ-Լիտովսկի պայմանագրին, որը ստորագրել է նաև Օսմանյան կայսրությունը: Թույլ տվեք Ձերդ գերազանցության ուշադրությունը հրավիրել մեկ կարևոր հանգամանքի վրա. հիշյալ շրջանները գտնվում են Վրաստանի և Բաթումի, Արդահան-Կարսի տարածաշրջանի միջև, հետևաբար՝ դրանց միացումը Օսմանյան կայսրությանը կնշանակի նաև վերջիններիս ճակատագրի կանխորոշում՝ ի նպաստ օսմանցիների, ինչը խախտում է Բրեստ-Լիտովսկի համաձայնագրի պայմանները: Բաթում-Արդահանի, Կարսի վերաբերյալ արդեն ներկայացրել եմ հատուկ գրություն՝ թիվ 141՝ սույն ամսվա 26-ի ամսաթվով:

Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագրով Վրաստանին է հատկացվել Բաթումի շրջանը՝ իր նավահանգստով, գրեթե 8000 քառ. կմ տարածքով, պղնձի հանքերով, թեյի արտադրությամբ և 90 տոկոս վրաց բնակչությամբ: Իսկ, այժմ, օսմանյան կառավարության գործողության արդյունքում, վտանգ կար որ մոտ 5000 քառ. կմ տարածք կկորսվեր՝ ներառյալ Ախալցխայի ու Ախալքալաքի շրջանները՝ ստեղծելով խառնաշփոթ:

Թեև պնդում են, որ դա հեղինակության հարց է օսմանյան կառավարության համար, սակայն դրան ես համամիտ չեմ: Ընդհակառակը՝ այս շրջանների միացումը Օսմանյան կայսրությանը կարող է վնասել ոչ միայն նրա, այլև Գերմանիայի հեղինակությանը Կովկասում ու նրա սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա համոզված եմ՝ հազիվ թե գտնվի գեթ մեկ քաղաքացի, ով կհավատա, որ նշյալ տարածքները կորսվել են առանց դիտավորության: Ախալցխայի և Ախալքալաքի հարցը բարձրացվել է հենց օսմանյան կառավարության պահանջով Բաթումի համաժողովի ընթացքում, որին ներկա էինք նաև ես ու Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Լոսսովը[15]: Եթե ընդունեինք օսմանյան կառավարության պահանջը, գեներալ Լոսսովը և ես ստիպված չէինք լինի շտապ մեկնել Բեռլին ու սկսել բանակցություններ Ստամբուլում համաժողով կազմակերպելու շուրջ:

Վրաց ժողովուրդը մեծ հույսեր է կապում Ստամբուլի համաժողովի հետ՝ վստահ լինելով, որ Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրած երկրները կպահեն իրենց ստանձնած պարտավորությունները:

---

[14] *Տե՛ս* А. З а к а р я н. Малоизвестный исторический документ (грузино-турецкое соглашение 1914 г.). – ИФЖ, 2005, № 3, с. 254–257.

[15] *Օտտո Հերման Ֆոն Լոսսով (1868–1938) – գերմանացի սպա, գեներալ-լեյտենանտ: 1908 թ. մայորի կոչումով ծառայել է Բեռլինի գլխավոր շտաբում: 1911 թվականից փոխգնդապետ Լոսսովը ծառայել է որպես թուրքական բանակի գլխավոր շտաբի ռազմական խորհրդական և մասնակցել Բալկանյան պատերազմներին:*

Ձերդ գերազանցություն, վստահ եմ, հիշում եք Անդրկովկասյան Հանրապետության կարճատև պատմությունը, որը հիմնադրվել էր վրաց քաղաքական առաջնորդների նախաձեռնությամբ և միավորում էր տարածաշրջանի բոլոր ժողովուրդներին՝ ներառյալ լեռնականները: Նախատեսվում էր ստեղծել ոչ սլավոնական ազգերից բաղկացած Կովկասյան համադաշնություն, որն իր էությամբ շահավետ կլիներ հենց օսմանյան կառավարության համար՝ որպես հյուսիսային հարևանությամբ կայուն պետություն: Ցավոք, օսմանյան կառավարությունը ոչ միայն չգնահատեց այդ հնարավորությունը, այլ՝ նաև Բաթումի համաժողովում դրեց այնպիսի անընդունելի պահանջներ, որոնք Անդրկովկասյան Հանրապետության գոյությունը դարձրին անհնար: Այնուհետև օսմանյան զորքերը գրավեցին Հայաստանն ու Ադրբեջանը, և Անդրկովկասի Սեյմը ստիպված եղավ արձանագրել այդ պետության լուծարումը: Վրաստանը ստիպված հռչակեց իր անկախությունը: Չնայած անցած փորձություններին՝ Վրաստանի կառավարությունը դեռևս հույս ունի, որ Կովկասի ժողովուրդները կկարողանան միավորել իրենց ջանքերը և ձևավորել դաշնային պետություն: Սակայն դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ օսմանյան կառավարությունը ճանաչի իր սխալները և վերադառնա Բրեստ-Լիտովսկի պայմանագրով սահմանված դիրքերին:

ՎԱԱ, ֆ. 1864, ց. 2, գ. 47, թթ. 40–46 շրջ.: Բնագիր: Մեքենագիր: